

ՍԱՂՄՈՍ 102

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Վշտալիի աղոթքը իր և Սիոնի ողորմու- թյան համար	ՏԻՐՈՁ հավիտենական սերը	Հիվանդության մեջ գտնվող հիվանդի աղոթքը	Մտահոգ երիտասարդի աղոթքը	Աղոթք դժբախտության մեջ
<u>MT ներածություն</u> Վշտալիի աղոթքը, երբ գանգատվում է Տիրոջ առջև				
102:1-7	102:1-2 102:3-7	102:1-2 102:3-11	102:1-2 102:3-8	102:1-2 102:3-5 102:6-8
102:8-11	102:8-11		102:9-11	102:9-11
102:12-17	102:12-17	102:12-17	102:12-17	102:12-14 102:15-17
102:18-22	102:18-22	102:18-22	102:18-22	102:18-22
102:23-28	102:23-28	102:23-24 102:25-28	102:23-28	102:23-24 102:25-27 102:28

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 102:1-7

- ¹ «Ո՛վ ՏԵՐ, լսի՛ր իմ աղոթքը,
Ու իմ աղաղակը թող Քե՛զ հասնի,
²Քո երեսը մի՛ թաքցրում ինձնից նեղությանս օրը,
Մոտեցրո՛ւ ինձ Քո ականջս,
Քեզ կանչածս օրը ինձ իսկույն պատասխանի՛ր:
³Քանի որ իմ օրերը ծխի պես սպառվեցին,
Եվ իմ ոսկորները հնոցի պես այրվեցին:
⁴Միրտս խոցվեց ու խոտի պես չորացավ,
Այնպես որ, մոռացա հացս ուտել:
⁵Հեծությանս ձայնից ոսկորներս մարմնիս կպան:
⁶Անապատի հավալուսնի նմանվեցի,
Ավերակների բուռի պես եղա:
⁷Անքուն մնացի ու տանիքի վրայի
Միայնակ ճնճողուկի պես եղա:

102:1-7 Այս պարբերությունը նկարագրում է սաղմոսերգուի վիճակը (այսինքն՝ «նեղությանս օրը», Սաղմ. 102:2,23-26, տես՝ Սաղմոս 6):

1. թվում է, թե ՅԱՀՎԵՆ ծածկել է Իր երեսը (այսինքն՝ չկա Նրա ներկայության զգացողությունը)
2. նրա օրերը սպառվում են ծխի պես, Սաղմ. 102:3
3. նրա ոսկորները այրվեցին, Սաղմ. 102:3
4. նրա սիրտը խոցվեց, Սաղմ. 102:4
5. իր հեծության ձայնի պատճառով նա մոռացավ հաց ուտել, Սաղմ. 102:4բ-5ա
6. նրա ոսկորները կպան իր մարմնին, Սաղմ. 102:5բ
7. նա նման է անապատի թռչնի՝ հավալուսնի, Սաղմ. 102:6,7բ
8. նա չի կարողանում քնել, Սաղմ. 102:7ա

Հնարավոր է այստեղ ֆիզիկական հիվանդության նկարագրությունը իրականում այս անձի գերության մեջ գտնվելու և տանարի կորստյան պատճառով սուզ է (տես՝ Սաղմ. 102:14,18-22, 23-28):

102:1-2 Սաղմոսը բացվում է մի շարք աղոթքի խնդրանքներով՝

1. լսի՛ր իմ աղոթքը – BDB 1033, KB 1570, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 17:6, 39:12, 54:2, 55:1, 61:1, 64:1, 143:1
2. իմ աղաղակը թող Քեզ հասնի – BDB 9, KB 112, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
3. Քո երեսը մի՛ թաքցրու ինձնից – BDB 711, KB 771, *Hiphil* ՀԱՅՑԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 27:9, 69:17, 143:7
4. մոտեցրու ինձ Քո ականջը – BDB 639, KB 692, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 17:6, 31:2, 71:2, 86:1, 88:2
5. իսկույն – BDB 554, KB 553, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (բառացի՝ «շտապիր», տես՝ NJB, անգլերեն թարգմանությունների մեծամասնությունը սա թարգմանում են որպես ՄԱԿԲԱՅ /BDB 555/)
6. պատասխանի՛ր ինձ – BDB 772, KB 851, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

102:1 «ՏԵՐ» Սա Իսրայելի Աստծո նիստի անունն է (տես՝ հհ. 1, 12, 15, 18, 21, 22): Այն առաջին անգամ կիրառվել է (ոչ թե Ծննդոց 1-ում, որտեղ նշվում է *Eyhwh*) Ծննդոց 2:4-ում (այսինքն՝ Ադամի և Եվայի հատուկ արարումը):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Դ

102:2 «Քո երեսը» Սա երբայերեն դարձվածք է ՅԱՀՎԵԻ անձնական ներկայության համար (տես՝ Թվոց 6:25, Սաղմ. 10:11, 13:1, 27:9, 30:7, 44:24, 51:9, 69:17, 80:3,7,19, 88:14, 143:7):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԼԵԶՎՈՎ

❖ **«օր»** Սա պատկերավոր լեզու է (BDB 398), որը կրկնվում է հինգ անգամ:

1. իմ նեղության օրը, Սաղմ. 102:2ա
2. իմ կանչած օրը, Սաղմ. 102:2գ
3. իմ օրերը, Սաղմ. 102:3ա
4. ամբողջ օրը, Սաղմ. 102:8ա
5. իմ օրերը, Սաղմ. 102:11

Երբայերեն *yom* բառը կարող է լինել տառացի կամ փոխաբերական:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՕՐ (yom)

❖ **«Քո ականջը»** Սա մարդաբանական դարձվածք է: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԼԵԶՎՈՎ

102:3 Այս համարը կիրառում է կրակի նկարագրություն, որպեսզի բնութագրի սաղմոսերգուի տվյալ պահի վիճակը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿՐԱԿ

102:6 «հավալուսին. . . բու» Հանախ ՀԿ-ում կիրառվող թռչուններն ու կենդանիները ոչ միան լքված վայրերը, այլ նաև դիվականի ներկայությունը նկարագրելու համար են (այսինքն՝ Եսայի 13:19-22, 34:11-15, Սոփ. 2:14): Այստեղ շեշտադրությունը մեկուսացման կամ միայնության տարրի վրա է:

Նաև նկատեք, որ նշված թռչունները դևտական առումով անմարտ են (տես՝ Ղևտ. 11:13-19, որը մեկ այլ որոշիչ է հաստատելու մերժվածությունը: Տես՝ UBS *Աստվածաշնչի ֆաունան և ֆլորան*):

<p>NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 102:8-11:</p> <p>⁸Ամեն օր իմ թշնամիներն ինձ նախատում են, Ինձ վրա զայրացածները երդվում են իմ դեմ:</p> <p>⁹Քանի որ մոխիրը հացի պես կերա Ու խմելիքս արցունքով խառնեցի՝</p> <p>¹⁰Քո տրտմության ու զայրույթի պատճառով, Քանի որ ինձ վեր բարձրացրիր ու ցած գցեցիր:</p> <p>¹¹Իմ օրերը երկարած ստվերի պես եղան, Ու ես խոտի պես չորացա:</p>
--

102:8-11 Այս պարբերությունը շարունակում է վիրավոր սաղմոսերգուի նկարագրությունը:

1. նրա թշնամիները (հավանաբար զավթիչները) շարունակ նախատում են նրան, Սաղմ. 102:8
2. նրա թշնամիները ծաղրում էին նրան
3. նրա թշնամիներն իր անունը գործածում էին որպես հայիոյանք (տես՝ Ես. 65:15, Երեմ. 29:22)
4. նա մոխիր կերավ և արցունքներն իր համար խմելիք եղավ (սրանք սզի նշաններ էին, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԳԱԼՈՒ ԾԵՍԵՐԸ, տես՝ Սաղմ. 42:3, 80:5):
5. նույնը ինչը #4
6. նրա օրերը նման են երկարող ստվերի (այսինքն՝ նրա ցավը երկարատև է)
7. նա խոտի պես չորանում է (տես՝ Ծննդ. 6:3, Հոբ 10:4, 14:1-2, Սաղմ. 78:39, 90:5-6, 102:4, 103:15-18, Եսայի 40:6, 1 Պետ. 1:24-25)

Աստվածաբանական խնդիրն այն է, թե ինչու էր նա տառապում: Սաղմոս 102:10 հայտնում է, որ նա կրում էր աստվածային դատաստան (տես՝ Սաղմոս 38): Հնարավոր է հարց առաջանա, թե արդյոք նա ազգի խորհրդապատկերն է կամ ներկայացուցիչը (տես՝ Սաղմ. 102:12-17, 18-22):

102:8բ

NASB, NKJV, NRSV

«նրանք, որ նախատում են ինձ»

REB

«զայրացած են»

NJB, Peshitta

«նրանք, որ ժամանակին մեծարում էին ինձ»

TEV

«ինձ ծաղրողները»

LXX

«նրանք, որ սովորաբար գովաբանում էին ինձ»

JPSOA

«ինձ նախատողները»

MT տալիս է «նրանք, որ նախատում են ինձ» (BDB 237 II, KB 248, *Psalm ԴԵՐԲԱՅ*): Հիմնական արմատը ָלֵךְ ունի երկու տարբեր և իրար հակառակ նշանակություն:

1. փառաբանել, KB 248 II

2. ծաղրել, KB 249 III

UBS Տեքստային Նախագիծը՝ էջ 375, չի կարող որոշել, թե որն է բնագրայինը: Թիվ 1-ը ենթադրում է, որ սաղմոսերգուի թշնամիները նրա մտերիմները կամ ուխտի մեջ հավատակիցներ էին: Թիվ 2-ը ենթադրում է, որ նրանք օտարազգիներ էին, որոնք գերեվարել էին Աստծո ժողովրդին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 102:12-17

¹²Բայց Դու, ՏԵՐ, հավիտյան ես մնալու,

Եվ Քո հիշատակը՝ սերնդից սերունդ:

¹³Դու ելնելու ես ու ողորմելու ես Սիոնին,

Քանի որ նրան գթալու ժամը,

Այո՛, որոշված ժամը, հասել է:

¹⁴Քանի որ Քո ծառաները հաճույք են ստանում նրա քարերից

Ու նախընտրում են նրա հողը:

¹⁵Հեթանոսները վախենալու են ՏԻՐՈՋ անունից,

Ու երկրի բոլոր թագավորները՝ Քո փառքից:

¹⁶Քանի որ ՏԵՐԸ կառուցելու է Սիոնը,

Հայտնվելու է Իր փառքով .

¹⁷Լսելու է չքավորների աղոթքը ու

Չի արհամարհելու նրանց աղերսանքը:

102:12-17 Այս պարբերությունն ունի ազգային շեշտադրություն: ՅԱՀՎԵՆ Իսրայելի հետ ունի նպատակ բոլոր ազգերի համար: ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ուշադրություն դարձրեք սաղմոսերգուի կողմից ՅԱՀՎԵԻ մասին պնդումները՝

1. Նա հավիտյան թարգավորում է (տես՝ Սաղմ. 9:7, 10:16, 29:10, Ողբ 5:19)

2. Նրա անունը (բառացի՝ «հիշատակը», BDB 271, տես՝ Սաղմ. 30:4, 97:12) մնալու է սերնդից սերունդ (տես՝ Ելից 3:15, Սաղմ. 135:13, նաև՝ Սաղմ. 100:5, 119:90)

3. Նա ողորմությամբ է վարվում իր ուխտի ժողովրդի հանդեպ

4. Նա կառուցելու է Սիոնը

5. Նա հայտնվելու է (այսինքն՝ Սիոնին) Իր փառքով

6. Նա լսում է չքավորների աղոթքները (BDB 792, հանդիպում է միայն այստեղ և Երեմ. 17:6, որտեղ այն կիրառվում է ծառի համար. արմատը «ներկացնել» ԲԱՅԻՑ է սերվել):

Սաղմոսերգուն խնդրում է ՅԱՀՎԵԻՆ, որպեսզի գործի Իսրայելի համար՝ հանուն Իր մեծ նպատակի:

102:12

NASB	«մնալու է»
NKJV, Peshitta	«հարատևելու է»
NRSV, REB, NJB, JPSOA	«տիրելու են»
TEV	«(բայ չկա)»
LXX	«մնալ»

MT տալիս է մի ԲԱՅ (BDB 442, KB 444, *Qal* ԱՆԿԱՏԱՐ), որը հիմնականում նշանակում է «նստած լինել» կամ «բնակվել»: Այս նկարագրությունն արտահայտում է ՅԱՀՎԵԻ ներկայությունը տիեզերքի գահի վրա:

ՅԱՀՎԵԻ ուղղված «ելիր» տարածված կոչը այս նույն նկարագրության մի մասն է: Տես հ.31-ի գրառումը:

❖ «**հավիտյան**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ ('olam)

102:13 «Դու ելնելու ես» Այս ԲԱՅԸ (BDB 877, KB 1086) ունի լայն ստուգաբանական դաշտ: Այն կարող է նշանակել՝

1. ՅԱՀՎԵՆ ելնելու է Իր գահից գործելու համար (տես՝ Սաղմ. 119:126)
2. ՅԱՀՎԵՆ ելնելու է Իր քնից (Նրա քիչ գործելու մասին նկարագրություն)
3. ՅԱՀՎԵՆ ակտիվանալու է հատուկ պատիվ շրջանից հետո

❖ «**Սիոն**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՈՆ

❖ «**որոշված ժամը հասել է**» ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 417) ունի «նշանակված ժամի» իմաստը (տես՝ Սաղմ. 75:2, Դան. 8:19): Այն հասկացությունը, որ ՅԱՀՎԵՆ վերահսկում է ժամանակը, տիեզերքը, պատմությունը, առանցքային է միակ ճշմարիտ Արարիչ Աստծո բնավորության հարցում (տես՝ Ժողովող 3):

102:14-17 Այս համարները վերաբերում են տաճարի կործանմանը:

1. ազգերը (այսինքն՝ ով սա արեց) վախենալու են, Սաղմ. 102:15
2. ՅԱՀՎԵՆ կառուցելու է Սիոնը և ցույց է տալու նրան Իր փառքը, Սաղմ. 102:16
3. չքավորի աղոթքները (այսինքն՝ Աստծո գերեվարված ժողովրդի) լսվելու են
4. ուշադրություն դարձրեք Սաղմ. 102:18-22

102:14 «Քանի որ Քո ծառաները հաճույք են ստանում նրա քարերից» Այս արտահայտությունն ինձ հիշեցնում է այն խորը զգացմունքային կապվածությունը, որ ժամանակակից Հուդայականությունն ունի Երուսաղեմի ողբի պատի նկատմամբ (այսինքն՝ Սողոմոնի Տաճարի հիմքի քարերը): Հուդայականությունը (այսինքն՝ Մովսեսի Օրենքը) կապված է երկրպագության հատուկ վայրի հետ (այսինքն՝ խորանը, հետագայում Երուսաղեմում գտնվող տաճարը):

❖ «**նրա փռչին**» Այս ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 779, KB 862) հաճախ գործածվում է քաղաքների ավերակների համար (տես՝ 2 Թագ. 20:10, Նեեմ. 4:2, 10, Եզեկ. 26:4,12):

102:15 «հեթանոսները/ազգերը վախենալու են» Աստվածաշնչի ուսումնասիրության տարիների ընթացքում ես համոզվել եմ, որ ՅԱՀՎԵՆ մշտապես ցանկացել է Իր պատկերով ստեղծված բոլոր մարդկանց փրկությունն ու վերականգնումը: Ես փորձել եմ արձանագրել այս կարևոր կանխատես-թաղրությունը հետևյալ Հատուկ Թեմայի մեջ:

Իհարկե, սա բարձրացնում է Աստծո կողմից Իսրայելին ՀԿ-ում տված խոստումների մասին հարցը: Ես նաև փորձել եմ արձանագրել ՀԿ-ից դեպի ՆԿ հայտնության փոփոխությունը մի Հատուկ Թեմայի մեջ (տես ստորև տրված Թեմաները):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՆՉՈՒՒ ԵՆ ՀԿ ՈՒԽՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ԱՅՂՔԱՆ ՏԱՐԲԵՐ ՆԿ ՈՒԽՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻՑ

- ❖ «վախ» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՎԱԽ
- ❖ «ՏԻՐՈՋ անունը» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»
- ❖ «փառք» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓԱՌՔ (ՀԿ, kabod)

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 102:18-22

18Սա գրվելու է գալիք սերնդի համար.
**Եվ այն ժողովուրդը, որ պիտի ստեղծվի,
Փառաբանելու է ՏԻՐՈՋԸ:**
19Քանի որ Իր սրբության բարձրությունից նայեց,
ՏԵՐԸ երկնքից երկրի վրա նայեց:
20Որպեսզի լսի բանտարկյալների հեծեժանքն
Ու արձակի մահապարտներին:
21Որպեսզի Սիրնի մեջ հռչակեն ՏԻՐՈՋ անունը
Ու Նրա փառաբանությունը Երուսաղեմում:
22Երբ ժողովուրդներն ու թագավորները միատեղ հավաքվեն՝
ՏԻՐՈՋԸ ծառայելու համար:

102:18-22 Այս պարբերությունը խոստում է ՅԱՀՎԵԻ Իր ուխտի վերականգնման մասին՝ Հուդայի ժողովրդի մեջ և տանարում:

Եբրայեցիների 1 մեջբերում է Սաղմ. 102:25-27 որպես Հիսուսին վերաբերող խոսքեր: Այս իմաստով Սաղմ. 102:28 կապ ունի Աստծո նոր ժողովրդի հետ (այսինքն՝ հավատացյալ հրեաներն ու հեթանոսները, տես՝ Հռոմ. 2:28-29, 9:6, Գաղ. 3:7-9, 13-14, 29, 6:15-16): Իմ կարծիքով Հիսուսն Աստծո վերջին և մեծագույն հայտնությունն է, ուստի, մենք պետք է ՀԿ-ը դիտարկենք ՆԿ-ի այքերի միջով և ոչ թե հակառակը: ՆԿ-ը Հիսուսի մասին է, ոչ թե Իսրայելի:

102:18ա Հայտնությունը արձանագրված է փաստագրելու և բացատրելու ՅԱՀՎԵԻ կամքն ու գործերը: Դրանք դառնում են յուրաքանչյուր սերնդի ընթացքում Նրա ժողովրդի համար հիմնական ուղեցույցները: Հավատարիմ հետևորդները պատվում, հարգում ր հնազանդվում են Սուրբ Գրքին (այսինքն՝ Սաղմ. 119:105, Առակ. 6:23):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ (դրա բացառիկությունը և ներշնչանքը)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԵՐՇՆՉԱՆՔ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ

102:19 ՅԱՀՎԵՆ գիտի, թե ինչ է տեղի ունենալու երկրի վրա (տես՝ Ելից 2:25, 3:7, Նեեմ. 9:9, Հոր 28:24, Սաղմ. 14:2, 33:13-14, 53:3, 80:14, Ողբ. 3:50, 5:1, Գործք 7:34, տես ամբողջական գրառումը Սաղմ. 33:13-17-ում):

«Երկիր» տերմինը (BDB 75) կարող է ունենալ մի քանի իմաստ, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՐ, ՀՈՂ, ԵՐԿՐԱԳՈՒՄՆԵՐ:

❖ «Իր սրբության բարձրությունից . . . երկնքից» Սրանք գուցա հեռուներ են: Առաջինը պետք է, որ վերաբերի Մորիա լեռան վրա գտնվող Տաճարին, սակայն երբ երկուսն էլ մի արձանագրության մեջ են, այն վերաբերում է ՅԱՀՎԵԻ բնակատեղիին՝ երկրի մթնոլորտից վեր:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔԸ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԵՐԿԻՆՔԸ

102:20 Այս նկարագրությունները վերաբերում են Հուդայի գերեվարված մարդկանց (և հավանաբար Իսրայելացիներին):

102:21 Սա աղոթք է գերիների համար, որ վերադառնան Հուդա:

102:22 Սա, ինչպես և Սաղմոսների Գիրք 4-ում շատ ուրիշ սաղմոսներ, ունի համընդհանուր շեշտադրություն (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ, ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ): Այս արտահայտությունը՝ «թագավորությունը ծառայելու է ՏԻՐՈՋԸ», ինձ հիշեցնում է Հայտն. 5:9-14 և 11:15:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 102:23-28

²³Նա թուլացրեց իմ զորությունը ճանապարհի վրա,
Կարճացրեց իմ օրերը:

²⁴Ես ասացի. «Ո՛վ իմ Աստված,
Ինձ մի՛ վերցրու օրերիս կեսին,
Քո տարիները սերնդից սերունդ են:

²⁵Ի սկզբանե երկրի հիմերը հաստատեցիր,
Ու երկինքները Քո ձեռքերի գործն են:

²⁶Դրանք կանցնեն, բայց Դու կմնաս:

Այո՛, դրանք բոլորը լաթի պես կմաշվեն,
Հանդերձանքի պես կփոխես դրանք ու կփոխվեն:

²⁷Բայց Դու նույնն ես և Քո տարիները վախճան չունեն:

²⁸Քո ծառաների որդիները կհարատևեն,

Ու նրանց սերունդը կհաստատվի Քո առջև»:

102:23-28 Այս պարբերությունը, ինչպես նախորդող երկուսը, կիրառում է անձնական նկարագրությունը ազգային իմաստով: Սա հաստատում է ՅԱՀՎԵԻ ստեղծագործությունը (Սաղմ. 102:26), որ Նա հավիտենական է (102:27): Նրա ժողովուրդը անցել է սարսափելի ժամանակների միջով (պարտություն, կործանում, գերություն), սակայն Նա վերականգնելու է նրանց (102:28), քանի որ ինչպես «երկինքն ու երկիրը» Նրա ձեռքերի գործն են (տես՝ Սաղմ. 8:6, 19:1, Եսայի 45:12, 48:13), այնպես էլ, ուխտի ժողովուրդը (տես՝ Սաղմ. 138:8, 143:5, Եսայի 45:11, 60:2, 64:8, նույնիսկ Ասորեստանը՝ Եսայի 19:25):

102:23-24 LXX թարգմանում է այս համարները որպես թե՛ ՅԱՀՎԵՆ է խոսում սաղմոսերգուի հետ: ՆԿ-ի Եբրայեցիների 1:10-12 մեջբերում է Սաղմ. 102:25-27 որպես Հիսուսին նկատի ունեցող խոսքեր: MT թարգմանում է այս նույն եբրայերեն բաղաձայնները տարբեր կերպով (տես՝ *Թինդեյլ ՀԿ-յան Մեկնություններ*, հատոր 16, Սաղմոս 73-150, էջ՝ 395-396):

102:23 «զորությունը» Այս տերմինը (BDB 470) կիրառված է ազգային զորության իմաստով, որը ազդեցության է ենթարկվել ՅԱՀՎԵԻ դատաստանի շնորհիվ (տես՝ Ղևտ. 26:20, Ողբ 1:6,14, Ամովս 2:14):

❖ «ճանապարհ» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒՂԻՆ, ՃԱՆԱՊԱՐՀԸ

102:24 «Ո՛վ իմ Աստված» Այս ԲԱՅԱԿԱՆՉՈՒԹՅՈՒՆԸ կիրառում է Աստծո չՄԱ-ում Աստծո համար ընդհանուր օգտագործվող անունը՝ *Էլ*:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Ա .

102:25-27 Այս համարները LXX-ից մեջբերված են Եբր. 1:10-11-ում, որտեղ վերջիններս նկատի ունեն չիսուսին (տես՝ Եբր. 13:8):

102:27 «Բայց Դու նույնն ես» ՅԱՀՎԵՆ չի փոխվում, ոչ էլ Նրա նպատակները (տես՝ Սաղմ. 33:11, Սաղ. 3:6, Հակ. 1:17): Սաղմոս 102:27 դրամատիկ հակասություն է 102:26-ն: Անգամ երկինքն ու երկիրը կանցնեն (տես՝ Եսայի 34:4, 51:6, Սատթ. 5:18, 24:35, Սարկ. 13:31, Դուկ. 21:33, 2 Պետ. 3:10, Հայտն. 20:11), բայց ոչ ՅԱՀՎԵՆ:

Աստծո անփոփոխ լինելու վերաբերյալ հետաքրքիր կարճ քննարկման համար տես՝ Միլարդ Էրիքսոնի, *Քրիստոնեական Աստվածաբանություն*, 2^{րդ} խմբագրություն, էջ՝ 304-308:

102:28 Համար 28-ի ԲԱՅԵՐԸ այնքան քաջալերող են: Հավատարիմ հետևորդները բնակվելու են ՅԱՀՎԵԻ հետ հավիտյան (տես՝ Սաղմ. 23:6):

1. «կհարատեսեն» - BDB 1014, KB 1496, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, հիմնականում նշանակում է՝
ա. «հաստատվել», տես՝ 2 Թագ. 7:10, 1 Մնաց. 17:9
բ. «խաղաղության և ապահովության մեջ բնակվել», տես՝ 2 Օրինաց 33:12, Սաղմ. 16:9, Երեմ . 23:6, 33:16
2. «կհաստատվի» - BDB 465, KB 464, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ, հիմնականում նշանակում է «ամուր հաստատված»
ա. աշխարհը, տես՝ 1 Մնաց. 16:30, Սաղմ. 93:1, 96:10
բ. ուխտի ժողովուրդը, տես՝ 2 Թագ. 7:16, Սաղմ. 89:4:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք այս Սաղմոսը ինչ-որ անհատի մասին է, թե մի ամբողջ ազգի:
2. Բացատրե՛ք Սաղմ. 102:6-7 նկարագրությունը:
3. Արդյո՞ք Սաղմ. 102:14 նկատի ունի տաճարի կործանումը:
4. Արդյո՞ք Սաղմ. 102:15, 22-ի համընդհանուր շեշտադրումը վերաբերում է գերությունից վերադառնալուն, թե էսկատոլոգիական միջավայրի նկարագրություն է:
5. Երկինքն ու երկիրը մնայո՞ւն են, թե անցողիկ:
6. Ինչպե՞ս է Սաղմ. 102:28 կապված՝
ա. Ծննդ. 12:1-3
բ. Հռոմ. 2:28-29